Արձանագրություն N 2

Երևան քաղաքում եզրաքարերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/132 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 15.07.2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/132 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հուլիսի 15-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/132 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	ԱՁ Վահրամ Կնյազյան
2	Իրտիգ ՍՊԸ*
3	Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ

* Իրտիգ ՍՊԸ-ի կողմից մուտքագրված հայտը համակարգում չի արտացոլվել, բացակայում են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում, գնային առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքում եզրաքարերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
ԱՁ Վահրամ Կնյազյան	144300	98900		98900
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ		99000		99000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Վահրամ Կնյազյան	Բավարար
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/132» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:50-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հովհաննիսյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան